

Գ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԵԿԻՊԱՑՈՒԹԵՆԻ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ ՍՊԻՏԱԿԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Այս հաղորդման մեջ բերվում են՝ 1958 թ. Սպիտակի շրջանի պայման-ներում եգիպտացորենի պարարտացման փորձերի արդյունքները:

Սպիտակի շրջանի միջին բարձրությունը, ծովի մակերևույթից, 1550 մետր է; Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը 450 մմ: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը՝ +7,4, բույսերի աշնանային առաջին ցրտահարությունը տեղի է ունենում հոկտեմբերին, իսկ գարնանային վերջին ցրտահարությունը՝ ապրիլին:

Ուսումնամիջել ենք հանքային պարարտանյութերի ազդեցությունը եգիպտացորենի սիլոսային մասսայի բերքի վրա Սպիտակի և նալբանդի ենթաշրջանում: Սպիտակի ենթաշրջանում փորձերը դրվել են Սպիտակի սովորողի կարունատային, շագանակագույն ավազակավայրին հողերի վրա, իսկ նալբանդի ենթաշրջանում՝ Մեծ Պարնի գյուղի կոլտնտեսության թույլ կարունատային, միջին հզորության սևահողերի վրա:

Փորձերը դրվել են ջրովի պայմաններում, եգիպտացորենի «Վիր-42» հիբրիդի վրա, 4 կրկնողությամբ. փորձամարդի մեծությունը եղել է 50 գ/մ:

Հանքային պարարտանյութերը տրվել են ցրտահերկի նախացանքային մշակության ժամանակ, գարնան կուլտիվացիայից առաջ: Ազուր տրվել է ամոնիումական սելիտրայի, ֆուֆորը՝ հասարակ սուպերֆուֆատի, իսկ կալիումը՝ կալիում քլորիդի ձևով:

Սպիտակի սովորում ցանքը կատարվել է մայիսի 12-ին քառակուսի բնային եղանակով, 70 սմ միջարքային և միջբնային տարածություններով: Ցանքի նախորդ կուլտուրան եղել է շաքարի ճակնդեղ, բույսերի 3—4 տերևների առաջացման շրջանում կատարվել է նոսրացում: Այդ ժամանակ յուրաքանչյուր բնում թողնվել է 2 առողջ բույս: Փորձի երկու վարիանտներում (հիմնական պարարտացման ֆոնի վրա) բույսերի առաջին կուլտիվացիայի ժամանակ կատարվել է մնուցում ազուրով և ֆուֆորով: Վեգետացիայի ընթացքում կատարվել է 3 կուլտիվացիա և 3 քաղցան-փիլորեցում:

Մեծ Պարնի գյուղի կոլտնտեսության դաշտում եգիպտացորենի ցանքը կատարվել է մայիսի 13-ին, 45 սմ միջջարքային և 35 սմ միջբնային տարածությամբ: Նախորդը եղել է աշնանացան ցորեն:

Ցանքի նոսրացումը կատարվել է ձեռքով, երբ բույսերի վրա առաջացել են 3—4 տերևներ: Յուրաքանչյուր բնում թողնվել է մեկ առողջ բույս: Անուցումը (երկու վարիանտներում) կատարվել է հունիսի 12-ին, բույսերի 3—4 տերևների առաջացման շրջանում, նախքան առաջին կուլտիվացիան: Վեգետացիայի ընթացքում կատարվել է 2 կուլտիվացիա և 3 քաղցան-փիլորեցում:

Փորձնական ցանքերի վրա կատարված դիտողությունների արդյունքները բերվում են աղյուսակ 1-ում:

Տարբեր պարարտանյութերի ազդեցությունը եղիպտացորենի աճի և զարգացման վրա
(30 բույսի միջնորդ)

Փորձի սխեման	Սպիտակի սովորող						Պարնի դյուզ			
	Ցերենիքի			Տարբեր սովորող			Տերենիքի		Տարբեր սովորող	
	Բույսի բարձրացությունը հը սմ-ով	Էլեկտրոնիքի ամպունությունը սմ-ով	Խոշորացությունը սմ-ով	Լողաբարի բարձրացությունը հը սմ-ով	Բույսի բարձրացությունը հը սմ-ով	Էլեկտրոնիքի ամպունությունը սմ-ով	Խոշորացությունը սմ-ով	Լողաբարի բարձրացությունը հը սմ-ով	Բույսի բարձրացությունը հը սմ-ով	
Սառացիչ	134,8	9,6	46,5	8,0	1,4	137,8	11	41,5	7	1,25
N ₅₀	153,1	11,4	49,5	8,8	1,6	157,5	12,1	49,3	8	1,5
P ₅₀	143,5	11,0	46,8	8,4	1,5	145	11	44	7,4	1,35
N ₅₀ P ₅₀	154,5	11,5	52	9,0	1,7	165,1	12	53,6	8,3	1,6
N ₅₀ P ₅₀ K ₅₀	158,0	11,7	57,8	9,5	1,8	169,6	12	56,7	8,6	1,7
N ₃₀ P ₃₀ K ₆₀ + N ₃₀	162,1	12	59,4	9,6	1,8	170,3	12	58,4	8,8	1,75
N ₃₀ P ₃₀ K ₆₀ + N ₃₀ P ₃₀	163,2	11,9	59,8	9,7	1,8	171	12,1	58,3	8,6	1,75

Խնձօս ցույց են տալիս տվյալները (աղյուսակ 1) պարարտանյութերն ազդել են բույսերի աճի և զարգացման վրա դրականորեն, ըստ որում՝ ազդունակելի ինտենսիվ, քանի ֆուժորը, ինչպես նաև կալիումը: Նույն օրինաշափությունը նկատվում է մյուս ցուցանիշների վերաբերյալ:

Առավել բարձր ցուցանիշներ ստացվել են վերջին երկու վարիանտներում, երբ պարարտանյութերն օգտագործվել են մաս-մաս, այսինքն՝ հիմնական պարարտացման և սնուցման ձևով:

Պարարտանյութերի ազդեցությունը եղիպտացորենի բերքի վրա

Փորձի սխեման	Սպիտակի սովորող				Պարնի դյուզ			
	M ± m	Ցերենիքի հավելումը		M ± m	Ցերենիքի հավելումը			
		g/հ	%		g/հ	%		
Սառացիչ	204,5 ± 8,9	—	—	254,5 ± 15,8	—	—	—	—
N ₅₀	247,0 ± 8,7	42,5	20,8	304,7 ± 14,2	50,2	19,7	4,0	4,0
P ₅₀	218,2 ± 10,8	13,7	6,7	264,8 ± 23,6	63,9	25,1	7,8	28,2
N ₅₀ P ₅₀	268,6 ± 6,5	64,1	31,30	318,4 ± 16,7	77,2	30,3	31,1	31,1
N ₅₀ P ₅₀ K ₅₀	275,2 ± 8,6	70,7	34,6	326,3 ± 19,6	79,1	—	—	—
N ₃₀ P ₃₀ K ₆₀ + N ₃₀	280,9 ± 14,8	76,4	37,4	331,7 ± 20,7	—	—	—	—
N ₃₀ P ₃₀ K ₆₀ + N ₃₀ P ₃₀	284,1 ± 10,5	79,6	38,9	333,6 ± 12,8	—	—	—	—

Խնձօս երկում է աղյուսակ 2-ի տվյալներից բերքի բարձրացման վրա մեծ ազդեցություն է ունեցել ազդունակ որը տվել է 43—50 ցենտներ հավելյալ բերք, ֆուժորը՝ 10—14 ցենտներ, իսկ կալիումը (աղոտ-ֆուժորի ֆոնի վրա) ընդամենը 7—8 գ/հ: Այսպիսով բերքի բարձրացման վրա մեծ ազդեցություն է ունեցել ազդունակ որը տվել է աղյուսակ 2-ի տվյալների կալիումը:

Երբ պարարտացրած (N₃₀ P₅₀ K₅₀ և N₃₀ P₃₀ K₆₀) վարիանտների ֆոնի վրա կատարվել է N₃₀ և N₃₀ P₃₀ սնուցման ստացվել է բարձր բերք: Պարարտացման

այդ ձևից ստացված լրացուցիչը բերքի քանակը 5,4—9 ցենտներով գերազանցում է այն վարիանտներին, որտեղ հանքային պարարտանյութերը աղբվել են միանված (N₆₀P₆₀K₆₀):

Առանձին դաշտային փորձերում ուսումնասիրվել են ազոտի և ֆոսֆորի բարձր գոզաները (աղյուսակ 3 և 4):

Բիոմետրիկ շափումները ցուց են տվել պարարտանյութերի դրական ազդեցությունը բույսերի աճման վրա:

Աղյուսակ 3

Հանքային պարարտանյութերի աղյուսությունը եգիպտացորենի աճի և զարգացման վրա (20 բույսի միջինը)

Փորձի սխեման	Սպիտակի սովորող					Պարնի գյուղ				
	Տերևների			1		Տերևների			1	
	Բնի	Կրկանությունը	Աճուրդը	Բնի	Կողմանը	Բնի	Կրկանությունը	Աճուրդը	Բնի	Կողմանը
Առանց պարարտացման . . .	139,5	9,2	50,5	8,5	1,35	142,8	10,8	39,3	7,2	1,3
P ₆₀ K ₆₀	143,1	9,8	52,7	8,9	1,4	153	11,4	45,4	7,7	1,4
N ₆₀ K ₆₀	153,6	11,3	53,9	9,1	1,65	162	11,8	53,1	8,3	1,55
N ₆₀ P ₆₀ K ₆₀	157,3	11,5	55	9,4	1,8	164,9	12,5	54,2	8,5	1,65
N ₁₂₀ P ₆₀ K ₆₀	166,6	12,7	60,3	9,6	1,9	176	13,1	62,1	9,3	1,85
N ₆₀ P ₁₂₀ K ₆₀	161,9	12,1	57,5	9,5	1,9	169,8	12	58,3	8,8	1,8
N ₁₂₀ P ₁₂₀ K ₆₀	168,8	12,9	61,1	9,8	1,95	177,1	13,6	64,9	9,5	1,95

Աղյուսակ 4

Հանքային պարարտանյութերի աղյուսությունը եգիպտացորենի բերքի վրա

Փորձի սխեման	Սպիտակի սովորող				Պարնի գյուղ					
	M ± m	Բնիքի հավելումը			M ± m	Բնիքի հավելումը				
		g/հ	%	g/հ		%				
Առանց պարարտացման . . .	201,3 ± 11,8	—	—	251,3 ± 13,3	—	—	—	—		
P ₆₀ K ₆₀	220,9 ± 7,8	19,6	9,7	271,2 ± 14,2	19,9	7,9	23,4	28,1		
N ₆₀ K ₆₀	250,9 ± 7,6	49,6	24,6	310,2 ± 15,7	58,9	23,4	30,7	38,1		
N ₆₀ P ₆₀ K ₆₀	267,9 ± 5,4	66,6	33,1	322,0 ± 9,3	70,7	31,4	78,9	49,3		
N ₁₂₀ P ₆₀ K ₆₀	303,7 ± 14,9	102,4	50,9	347,1 ± 8,8	95,8	38,1	124,0	49,3		
N ₆₀ P ₁₂₀ K ₆₀	289,2 ± 13,4	87,9	43,7	330,2 ± 12,4	78,9	31,4	328,5 ± 8,9	127,2	63,2	375,3 ± 12,9
N ₁₂₀ P ₁₂₀ K ₆₀	328,5 ± 8,9	—	—	—	—	—	—	—		

Այսպիսով հանքային պարարտանյութերը խիստ բարձրացրել են եգիպտացորենի կանաչ զանգվածի բերքը, ըստ որում առավել էֆեկտիվությամբ աչքի են ընկել ազոտական պարարտանյութերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սպիտակի շրջանի հողակլիմայական պայմաններում հանքային պարարտանյութերի կիրառումից ստացվել է եգիպտացորենի սիլոսային զանգ-

Վածի բերքի մեծ հավելում, ըստ որում, ազոտական պարարտանյութերը գրավում են առաջին, ֆոսֆորական պարարտանյութերը՝ երկրորդ, իսկ կալիումականը՝ երրորդ տեղը ($N>P>K$):

2. Ամենաբարձր բերք ստացվում է ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի համատեղ օգտագործումից:

Г. М. МАРТИРОСЯН

УДОБРЕНИЕ КУКУРУЗЫ В СПИТАКСКОМ РАЙОНЕ

Р е з ю м е

Полевые опыты в Спитакском районе показали, что минеральные удобрения значительно повышают урожай зеленой массы кукурузы. По своей эффективности первое место занимают азотные удобрения, на втором месте — фосфорные, а затем калийные удобрения.

Наибольшие прибавки урожая получены от совместного применения азотных, фосфорных и калийных удобрений, в особенности при перенесении части нормы азотного и фосфорного удобрений в подкормку растений.